ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մայիսի 2024 թվականի N 830-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի N 218-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի N 1228-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ, 34-րդ և 37-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 21-ի «Հայաստանի Հանրապետություն ներմուծվող սննդամթերքի ռիսկայնության հիման վրա հսկողության մեթոդաբանությունը հաստատելու մասին» N 218-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ՆՄՈՒՇԸ ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԵՖԵՐԵՆՍ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ».

2) որոշման նախաբանում «մասին» բառը փոխարինել «և 16-րդ հոդվածի 8-րդ մասերին» բառերով.

3) որոշման 1-ին կետում «Հաստատել» բառը փոխարինել «Սահմանել» բառով, իսկ «համաձայն» բառից հետո լրացնել «N 1» թվով.

4) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին կետով՝

«1.1. Սահմանել պետական բյուջեի միջոցների հաշվին պահեստային նմուշը այլ պետության ռեֆերենս փորձարկման լաբորատորիա ուղարկելու դեպքերը և կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:».

5) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.3-րդ կետով՝

«1.3. Սույն որոշման 1.1-ին կետը գործում է մինչև Հայաստանի Հանրապետությունում ազգային ռեֆերենս փորձարկման լաբորատորիայի նշանակումը:».

6) որոշման հավելվածի աջ անկյունում «Հավելված» բառից հետո լրացնել «N 1» թիվը.

7) որոշման հավելվածի 3-րդ կետի N 1 աղյուսակում՝

ա. 23-րդ կետից հանել «սննդի մեջ օգտագործելու համար պիտանի խոշոր և մանր աղացվածքի ալյուր և խեցգետնակերպերից հատիկներ» բառերը,

բ. 25-րդ կետից հանել «ալյուր՝ մանր և խոշոր աղացվածքի, և հատիկներ կակղամորթներից՝ սննդի մեջ օգտագործելու համար պիտանի» բառերը,

գ. 27-րդ կետից հանել «ալյուր՝ մանր և խոշոր աղացվածքի, և հատիկներ՝ ջրային անողնաշարավորներից՝ բացի խեցգետնակերպերից և կակղամորթներից՝ սննդի մեջ օգտագործելու համար պիտանի» բառերը.

8) որոշման հավելվածի 3-րդ կետի N 1 աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետով.

«28.1	Ալյուր՝ մանր և խոշոր աղացվածքի և հատիկներ ձկից, խեցգետնակերպներից, կակղամորթներից և ջրային այլ անողնաշարավորներից, սննդի մեջ օգտագործելու համար պիտանի	0309	15».

9) որոշման հավելվածի N 4 աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«N 4 աղյուսակ

Դասակարգումն ըստ զանգվածի (քանակ, ծավալ)

Ռիսկը	Զանգվածը (կգ կամ լիտր)	Միավորը
Բարձրագույն	10000-ից ավելի	15
Բարձր	5000-ից ավելի՝ 10000-ը ներառյալ	10
Միջին	1000-ից ավելի՝ 5000-ը ներառյալ	5
Ցածր	մինչև 1000-ը ներառյալ	1

».

10) որոշման հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11.1-ին կետով՝

«11.1. Սույն կարգի 11-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված դեպքերում նմուշառում կատարելիս նմուշները լաբորատոր փորձարկման են ներկայացվում արագ արձագանքման միջազգային համակարգերի, այլ երկրների լիազոր մարմինների հաղորդումների, ԵԱՏՄ-ի միջոցով ստացված տվյալների կամ սննդամթերքի անվտանգության բնագավառի լիազոր մարմնի վերահսկողության արդյունքներով հայտնաբերված շեղումների բոլոր ցուցանիշներով։».

11) որոշումը լրացնել N 2 հավելվածով՝ համաձայն հավելվածի։

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության նպատակով փարձարկումներ իրականացնող

լաբորատորիաների՝ մրցույթով լիազորման կարգը հաստատելու մասին» N 1228-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

31.05.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ